# ԱՐԵՎ-ԱՐԵԳԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՄԻ ՏԻՊՈՒՄ

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

*Հայ բանահյուսության որոշ ժանրերի մեզ հասած նմուշները պահպանել են արևի պաշտամունքի, արև-արեգակը խորհրդանշող հավքի՝ մասնավորապես արագիլի, վիշապամարտին աղերսվող և հնավանդ այլ պատկերացումների, պաշտամունքի ու հավատալիքների հիշողություններ և վերապրուկներ:*

*Ստորև ներկայացվող շարադրանքը վերաբերում է հայ ժողովրդական հեքիաթների մի տիպի, որի տարբերակները գրի են առնվել XIX դ. վերջին Թիֆլիսում, Արցախում, Տավուշում ու XX դարի երկրորդ կեսին համշենահայերի միջավայրում: Մեր դիտարկումները խարսխվում են հեքիաթի յոթ տարբերակների ընձեռած նյութերի վրա: Ըստ հարկի՝ օգտագործել ենք նաև բանահյուսական այլ ժանրերի նմուշներ (հանելուկ, ավանդություն) ու ազգագրական նյութեր:*

*Հեքիաթի հինգ տարբերակներում սյուժեն ունի հետևյալ սխեման: Ընտանիքը կարիքավոր է: Որդիներից մեկը, մեծ մասամբ նշվում է կրտսերը, ամուսնանում է մի աղջկա հետ, ով նախապես պայման է դնում՝ ընտանիքի տնտեսական կյանքը պետք է տնօրինի ինքը [տարբերակ՝ փոխադարձ համաձայնությամբ տրվում է իրեն (ՀԲ, էջ 196)]: Փոքր հարսը կարգադրում է և պարտավորեցնում ընտանիքի անդամներին դրսից դատարկաձեռն տուն չվերադառնալ: Նրա կարգադրությունը ճշտիվ կատարվում է. բերում են սատկած օձ (լոկ), մի տարբերակում (ՀԱԲ, պր. 15, № 24)՝ սատկած ձիու ազդր, մի այլ տարբերակում (ՀԲ, էջ 196)՝ թագավորի գոտուց մի կտոր: Երկնքով սուրացող թռչունը (արագիլը, Զմրուխտ դուշը, դուզդունը), տեսնելով ցանկապատին զցած սատկած օձ (լոկ), իջնում է, թողնում կտուցի ոսկե առարկան, վերցնում սատկած օձը և շարունակում թռիչքը: Թռչունի կտուցին թագուհու ոսկե մատանի է, ապարանջան, տարբերակներում՝ թագավորի թագ, ոսկե գոտի, կարմիր թաշկինակի մեջ փաթաթած ոսկե զարդեղեն, մի տարբերակում՝ անգին քար (ՀԺՀ, հ. V, 74), մի այլ տարբերակում (ՀԲ, էջ 196)՝ թագավորական գոտուց մի կտոր: Հեքիաթի ամենավաղ գրառված տարբերակում թռչունի կտուցին ոսկե մանյակ էր, որը նա թողնում է՝ վերցնելով սատկած օձին: Այնուհետև փոքր հարսը*

[1] *Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. V (Արցախ), Երևան, 1966, -74, հ. VII (Արցախ-Սյունիք), Երևան, 1979, -35, 38, 89, Գ. Տեր-Ալեքսանդրյան. Թիֆլիսեցոց մտավոր կյանքը (այսուհետև՝ ԹՄԿ), Թիֆլիս, 1885, -11, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), պր. 15 (Արցախ), Երևան, 1983, -24, Երևան, 2000, Համշենահայ բանահյուսություն (այսուհետև՝ ՀԲ), Երևան, 1991, էջ 196 (այս աղբյուրներն այսուհետև կնշվեն մեջբերումներին կից):*

*տիրանում է թռչունի բերած ոսկե առարկային, որը և դառնում է ընտանիքի բարեկեցության, հարստացման աղբյուրը (ԹՄԿ, № 11):*

*Ի մի բերելով այն առարկաները, որոնք երկնքով սուրացող թռչունը բերում է, հասցնում հեքիաթում առկա տուն, որի ցանկապատին սատկած օձ (լոկ) է (մի տարբերակում՝ սատկած ձիու ագդր), ընդգծենք, որ դրանք՝ մատանի, ապարանջան, թագ, գոտի (մի տարբերակում՝ անգին քար), կլոր ձև ունեն: Առարկաները ոչ միայն կլոր են, այլև ոսկուց են (մի տարբերակում՝ թանկագին քար): Դրանք փայլուն են, լույս են ճառագում արեգակի նման. «Մի քշեր էտ հառթնեն պատրունը կյամ ա տրա տոռնը պենում, տեսնում էտ քշերվա խրվարում հենց ա մին իրիքնակ ինի երգյինքա0ն վրեր եկած, լու0սա0 էլ մարթու աշկ ա օգում, թա ծակե» (ՀԺՀ, հ. VII, -35), «Եպ օր մտնա0 կու ադ դայիշի փարչրն լու0ս գուդա, լու0ս գուդա, ամա ինչպես լու0ս ըներ դեսած չունեյնը» (ՀԲ, էջ 196):*

*Ըստ հնագիտական տվյալների՝ վաղնջական ժամանակներում ոսկե առարկաները թռչունի կտուցին ունեցել են ծիսահմայական հատկություններ: Իրենց ձևով լինելով կլոր, շրջանաձև՝ թագ, մատանի, ապարանջան, գոտի, խորհրդանշել են արևի կլոր սկավառակը: Թագը, ինչպես նաև մատանին և ապարանջանը, իմաստավորել են հոգևոր ու աշխարհիկ իշխանություն: Մետաղե գոտին լայն գործածություն է ունեցել հին Հայաստանում: Այն ունեցել է ոչ միայն ծիսահմայական նշանակություն, այլև ֆիզիկական-պաշտպանական, որի հեռավոր հիշողությունն առկա է մեր քննարկվող հեքիաթի սյուժեում[2]:*

*Երկնքով սուրացող թռչունը, որը կտուցին կրում է կլոր, ոսկե, «պսպղուն» առարկա, հեքիաթի սյուժեում ներկայացնում է արև-արեգակի վերաբերյալ վաղնջական պատկերացումների հիշողությունը, որ կենցաղավարել է Հայկական լեռնաշխարհում՝ հայ ժողովրդի նախնիների միջավայրում: «Վաղնջականը թերևս թռչնակերպ պատկերացումն է պահպանված հանելուկներում: Այստեղ արևը կերպավորված է երկնքում սուրացող թռչունի կերպարանքով՝ կտուցին ոսկե օղ, կամ էլ երկու ոսկե պսակ, կամ էլ երկու ոսկե արագիլի տեսքով»[3]:*

*Արև-արեգակի խորհրդանիշն ավելի առարկայական է ներկայացված հայ ժողովրդական հանելուկներում.*

*Հավք մե իջավ էրկընուց*
*Ոսկե լագան էր կտուց[4]:*

*Հավքը թռավ երկնքեն,*
*Ոսկե լյանգյառին կտուցին[5]:*

*Սյուժեի զարգացման հետագա ընթացքը պայմանավորված է, ինչպես վերը նշվեց, սատկած օձի (լոկի) աղերսով: Ոսկե առարկան թողած թռչունը*

---

[2] *Հ. Իսրայելյան. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 140–141:*

[3] *Ս. Հարությունյան. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 43:*

[4] *Ս. Հարությունյան. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, -9:*

[5] *Գ. Հակոբյան. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 368:*

*վերցնում է սատկած սողունին և շարունակում թռիչքը: Թռչուն-օձ հարաբերությունը թշնամական է: Նշենք, որ թշնամության հիմքը բնախոսական է: Մասնավորապես՝ այն վերաբերում է արագիլներին, որոնք կերակրվում են գերազանցապես սողուններով, օձերով[6]: Երբ արագիլն օձ է տեսնում ցածում, շեշտակի սուրալով իջնում է, կտուցով հարվածում օձի գլխին, սատկացնում և ապա տանում իր բունը[7]: «Կոտկոտ առագել, որ է արագիլն, երկան սրունքները քշտած, կտուցը սրած «հո՛դ» «հո՛դ» ձայնելով իր բունեն էլեր 'ի դաշտ, կը վազե՝ ջրի և ցամաքի օձերը ձերբակալելու և սպաննելու, իբրև ոստիկան և իբրև դատավոր»[8]:*

*Քննարկվող հեքիաթի մի տարբերակում «բրյանտե» մատանին փոքր հարսը հայտնաբերում է սատկած օձի բերանում (ՀԺՀ, հ. VII, -35). այս տարբերակում թռչունը գործառույթ չունի: Այս դեպքում գործ ունենք մի հավատալիքի հետ, որը տարբեր դրսևորումներ ունի հայոց աշխարհի ազգագրական մի շարք շրջաններում: Լոռիում հավատում են, որ շահմար օձերի բերանում ընկույզի մեծությամբ ուլունք կա, որից գիշերները լույս է ճառագում. «Եթե մեկը մոխիր անի այդպիսի օձի բնի առաջ, կարող է այդ հուլը ընկնել նրա մեջ և մնալ, այն ժամանակ գտնողը, ինչ բանի մեջ որ նրան ձգի՝ այն անսպառ կդառնա»[9]: Ուշագրավ է, որ ուլունքը կլոր է, լույս է արձակում և* անսպառ *լինելու հատկություն ունի (հարստություն, բարեկեցություն): Իսկ Արցախի Քռասնի գյուղի մերձակայքի թզենիների տակ մի ոսկեղջյուր օձ է ապրում, որը երբեմն դուրս է ցցում եղջյուրները, և ով տիրանա դրանց, իմաստություն կստանա:*

*Ըստ Վասպուրականի հայոց մեջ կենցաղավարող հավատալիքի՝ Դաղոնաց լեռան քարերի այրերի մեջ օձեր են ապրում. «Օձերը ունին իրենց թագավոր և թագուհի. թագավորը արեգակի պես քարակն ունի յուր գլուխը, այսինքն թագ. և թագուհին բոցագույն բրչեր, բրչամ, այսինքն վարս...»[10]: Թռչունը հեքիաթի մի տարբերակում թագ ուներ իր կտուցին (ՀԱԲ, պր. 15), իսկ մի տարբերակում էլ՝ թագուհու ոսկե զարդեղենը (ՀԺՀ, հ. VII, -89):*

*Հեքիաթը պահպանել է նաև հիշողությունը արևի հետ առնչվող մի վաղնջական հավատալիքի, ըստ որի՝ արևը կլանվում է խտոնիկ կենդանու՝ օձ-վիշապի կողմից, ազատագրվում և շարունակում լույս ու ջերմություն սփռել, վերակենդանացնել բնությունը, մարդուն պարգևել կենսամիջոցների հարատևություն:*

*Արագիլի հայտնվելը երկնքում, կտուցին՝ ոսկե առարկա, խորհրդանշում է հայ հողագործի համար կենսական նշանակություն ունեցող գարնան գալուստը: Արևի տարեկան շրջապտույտը Հայկական լեռնաշխարհում սկիզբ է առնում մարտ ամսին: Հողագործ հայը դիտարկել է այդ օրինաչափությունը.*

---

[6] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 682:*

[7] *Գ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 272:*

[8] *Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն. Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 130:*

[9] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 3 (Բորչալու), Երևան, 2004, էջ 203:*

[10] *Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն. Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 48:*

*Մարտի 9-ին*
*Լազլազ վըր բնին*[11]*:*

*Հեքիաթի թիֆլիսյան տարբերակում հենց սկզբից է մատնանշվում, որ ընտանիքը դժբախտ էր: Եթե այլոց ցանքսերն առատ բերք են տալիս, ապա այս ընտանիքի բերքը մի քանի անգամ պակաս էր լինում. «... ինչ որ ցանում են էլի, թե ուրիշի համա մեկին քսան ու եառսուն է էլի գալի, սրանց համա հինգ ու վեցն էլ չէ էլի գալի» (ԹՄԿ, -11, էջ 372): Մինչդեռ արագիլի՝ կտուցով մանյակ բերելուց ու օձը ոչնչացնելուց հետո ցանքսերն առատ բերք են տալիս (ԹՄԿ, -11): Այսինքն՝ արևի ջերմառատ ճառագայթները նպաստում են բերքի առատությանը, ապահովում են մարդուն կենսամիջոցներով:*

*Հեքիաթի սյուժեի թռչուն-օձ-փոքր հարս եռյակում կարևոր գործառույթ է իրականացնում փոքր հարսը: Հայկական ավանդույթում ոչ հեռու անցյալում փոքր հարսը որևէ դեր չէր խաղում: Մինչդեռ քննարկվող հեքիաթի բոլոր տարբերակներում նրա գործառույթը նշանակալից է, որը հիմնականում կարելի է բնութագրել իբրև կարգավորիչ: Նրա բոլոր գործողությունները նպատակադրված ու նպատակաուղղված են ընտանիքի կենսամիջոցների ապահովմանը: Եվ իր խոհեմ, կարգավորիչ դերի շնորհիվ նա կարողանում է ընտանիքը դարձնել ոչ միայն բարեկեցիկ, այլև հարուստ, ունևոր, երջանիկ ու համերաշխ: Հարսն է տնօրինում ոսկե առարկաները, որոշում ցանքսի հասունացման աստիճանը, տեսնում օձի բերանում «բրյանտե» մատանին, կարգադրում տուն կառուցել և եղբայրներին՝ բաժանվել ու ապրել սիրով, համերաշխ:*

*Այս դիտարկումներից կարելի է եզրակացնել, որ փոքր հարսն իր հատկանիշներով ու գործառույթով խորհրդանշում է հայոց դիցարանի Անահիտ աստվածուհուն, որին սիրով ու հիացմունքով են ներկայացրել V դարի, թեև արդեն քրիստոնյա, հայ պատմիչները. «Մանավանդ այս մեծ Անահիտ տիկնոջը, որը մեր ազգի փառքն է... Նա է մեր բոլոր զգաստությունների մայրը, բարերարը ամբողջ մարդկային բնության և դուստրը՝ մեծ, քաջ Արամազդի»*[12]*:*

*Ոսկե որոշակի ձև ունեցող առարկա - թռչուն, օձ, փոքր հարս զույգի վերաբերյալ մեր դիտարկումներն ամփոփելով՝ նշենք, որ հեքիաթը պահպանել է հայոց բանահյուսական կենցաղում և ոչ միայն հեքիաթներում, հավատալիքային համակարգում վաղնջական ժամանակներում գոյություն ունեցող արև-արեգակի, օձի, Անահիտ աստծո պաշտամունքի հիշողություններն ու վերապրուկները: Հասարակական հարաբերությունների զարգացման հետագա ընթացքով է պայմանավորված ոսկու հանդես գալն իր բուն սոցիալական գործառույթով՝ «իբրև հարստության, ունեցվածքի խորհրդանիշի, որին միշտ էլ ձգտել ու երազել է մարդկային միտքը, որպես կենսապահովման կարևոր միջոցի»*[13]*:*

---

[11] *Գ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 85:*
[12] *Ագաթանգեղոս, Երևան, 1977, գլ. 53:*
[13] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայոց ոսկեպատում. հին Հայաստանի ոսկին, Երևան, 2007, էջ 315:*

## РЕЛИКТЫ КУЛЬТА СОЛНЦА В ОДНОМ ИЗ ТИПОВ АРМЯНСКОЙ НАРОДНОЙ СКАЗКИ

*АЛВАРД ГАЗИЯН*

Р е з ю м е

Аист, несущий в клюве золотой предмет – пояс, браслет, кольцо, пролетая над домом, замечает на заборе дохлую змею. Бросив из клюва золотой предмет, аист хватает змею и продолжает путь. Младшая невестка этого дома овладевает золотым предметом, который становится источником благополучия, согласия и любви в семье, благодаря разумному распоряжению молодой невестки. В сказке аист с золотым предметом в клюве – символ солнца по представлениям предков армян, а невестка, приносящая семье благосостояние, символ богини-матери Анаит. Оба божества были глубоко почитаемы древними жителями Армянского нагорья.

## THE RELICTS OF SUN WORSHIP IN ONE OF THE TYPES OF ARMENIAN FOLKTALE

*ALVARD GHAZIYAN*

S u m m a r y

The stork flying over the house, with a gold object (belt, bracelet, ring) in its beak notices a dead snake on the fence. Throwing the gold object, it grasps the snake and continues the way. The younger daughter-in-law of the house takes the gold object, and it becomes the source of prosperity, consent and love in the family, due to wise arrangements of the younger daughter-in-law. According to the ancestors of Armenians, the stork with the gold ring in its beak is the symbol of the Sun, and the daughter-in-law, who brings prosperity to the family is the symbol of mother-goddess Anahit. Both deities were deeply worshiped by inhabitants of Armenian plateau.